

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել [ԱՆՎՃԱՐ](#):

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать [БЕСПЛАТНО](#).

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for [FREE](#) scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: [info@artsakhlib.am](mailto:info@artsakhlib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳՐԱԳԱՐԱՆ

ԳՅԴ ԵՍԿ 07թ

«Ազգ եւ ժառանգություն»  
Համահայկական  
երիտասարդական  
գիտաժողով



Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն  
Ստեփանակերտ  
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն  
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն  
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման  
կենտրոն» ՊՈԱԿ  
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»  
համահայկական  
երիտասարդական  
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.  
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
գիտության վաստակավոր գործիչ

Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած  
Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

**Կերպարանային առանձնահատկությունների գեղագիտական  
հայտնությունը պատերազմական դրվագներում  
(Վ. Հակոբյանի «Քրիստոսի ծաղիկները» վիպերգը)**

Վարդան Հակոբյանի պոեզիան իր գաղափարական հագեցվածությամբ եւ գեղարվեստական ինքնատիպ առանձնահատկություններով ժամանակակից հայ հոգեւոր մշակույթի նվաճումներից է: Դեռեւս իր առաջին «Սեղեղիներ» գրքով (1969թ.) նա արժանացավ ընթերցողների եւ գրաքննադատների լուրջ ուշադրությանը: Ապա լույս տեսան նրա «Սեր եւ ժպիտ» (1973թ.), «Շանթահար կաղնին» (1974թ.), «Ծառի անունից» (1978թ.), «Մի կռունկ անցավ» (1983թ.): Արցախի ազատագրական շարժումը նոր երակ բացեց Վ. Հակոբյանի պոեզիայում: Բանաստեղծը հասկացավ, որ պետք չէ կորստյան ցավից թեւաթափ լինել այլ պետք է արիությամբ հաղթահարել արգելքը, հազար անգամ վերապրել ցավը այն դարձնելով կտավ, պատմություն ու ասք: Ասք, որը կկրի «Քրիստոսի ծաղիկները» վերնագիրը:

Վարդան Հակոբյանի պոեմներն ընթերցելով մենք տեսնում ենք, թե ինչպես հողի քաղցրությունը, մոր վեհությունը, բնության երանգների անկրկնելիությունը, սիրո իմաստը, մարդու եւ հավերժության փոխհարաբերության փիլիսոփայությունը, պատմական անցյալի եւ ներկայի առնչությունները գալիքի հետ եւ այլ գաղափարներ ուղղակի բանաստեղծություններից մտնում են պոեմների շրջանակները ձեռք բերելով նոր առանձնահատկություններ եւ ավելի խտացված հատկանիշներ:

Այն, ինչ հնարավոր չէ մեկ բանաստեղծությամբ ասել, բանաստեղծը դարձրել է լայնածավալ կտավ: Դա են վկայում Վ. Հակոբյանի «Մեսրոպ Մաշտոցն Ամարասում», «Տաճարն Աստծո», «Համանվագ», «Գողգոթա», «Երամականչ», «Հրեշտակը եւ սատանան», «Քրիստոսի ծաղիկները» պոեմները:

«Քրիստոսի ծաղիկները կամ դաղարներ կտրուկ շրջադարձերով» վիպերգը բարդ կառուցվածք ունի, թե ըստ ձեւի եւ թե ըստ բովանդակության: Ահա, թե ինչ է գրում գրականագետ Ս. Սարինյանը գրքի առաջաբանում. «Այն սկսվում է «Երկիր սրբավայր» փիլիսոփայական նախերգանքով բանաստեղծի երեակայությունն ուղղելով հեռու-հեռավոր ինչ-որ եզերքի որոնելու «տիեզերական այս

թո՞ղարհի մեջ բզկտվող աշխարհի անենամեծ սերը» եվ նա, որ աստվածների ու չաստվածների անվերջանալի պայքարում» ժամադիր է եղել անվերածանելի ժամանակից դուրս ընթացող հավերժության վայրկյանին, որ իր հանդիպման վայրկյանն է, ավա՞ղ, պատրանք է միայն ու երազային տեսիլ: Հանդիպման վայրկյանները չեն վերադառնում, բայց Աստծո շնորհիվ նա նկարում է իր տեսիլը՝ «արյունոտ դրախտավայրը», որ գոյանում է Գողգոթայի ծաղիկներից: Եվ պատրանքի մեջ կայանում է լուռ ու անխոս մի հանդիպում եւ հրաբորբ մի սեր հեթանոս աստվածների նախնադարյան բռնկումով»:

Խոտերի ծայրին երազների երկինքը քայլում է այնպես,

Որ ոչ մի ծաղիկ չի ճկվում եւ չի թեքվելու,

Քանի դեռ սուրսայր թեղիկները խոտի կամ հասկի

Չեն դիպում անպերհմ,

Որոնք պայթում են փուչիկների պես ուռնացած օրվա

Եվ տեղիք տալիս հորդ տեղումների:

Առաջին երեք քաժիկները գեղեցիկ նախերգանքներ են, նկարագրություններ «երկիր սրբավայրի», «դրախտավայրի թունավոր ծաղկի» եւ «գալիք հրավերքի» մասին:

Երկրի վրա որերորդ անգամ ապրվում է կյանքը իր կռիվներով, կոռուպցիաներով, ինտրիգներով, մաֆիաներով: Բոլորն իրար դեմ կռվում են, ավերում, կործանում, ընտրում անհաշիվ նախագահներ, վարչապետներ եւ նախարարներ («միայն զինվոր լինելն է երկրի, ուր տեղն ազատ է ինչքան ուզես, խնդրեն»):

Իսկ դրախտավայրը կայանում է միայն կորսվելուց հետո

Մենք ամեն վայրկյան ինչ-որ տեղից դուրս ենք գալիս, գնում

Եվ այլեւս մեզանից ոչ ոք չի վերադառնում

Որքան էլ առավոտից վարդաշատ լինի տրամադրությունը:

... Ապագայի հրավերքը Աստծո սուրբ ոտնահետքն է հայոց

Բիբլիկական լեռան վրա,

Իսկ լեռն ապրում է

Անխուսափելի հարյուր ու մի կյանք մեկը մեկից անտամելի:

Բանաստեղծը խոսում է ասված ու չասված խոսքերի, կեղծ ու անկեղծ պահերի, սովորական ու անսովոր ապրվող կյանքի մասին:

Յուրաքանչյուր վայրկյան, որ գալիս է, մեզ տիրեցնում է առավել, քանզի ավելի խորն ենք ապրում նախորդ վայրկյանի ողբերգությունը:

Այնուհետեւ սկսվում է արծակ պատումը. վիպերգի ժամանակը Արցախի ազատագրական պայքարի տարիներն են մարդկանց

կենսագրական հուշերով լցված, հուշեր, որոնք ավելի շատ փոխտոփայական մենախոսությունների են նման:

Մենախոսում է Արցախը:

Մենախոսությունը նրանց մասին է, ովքեր եղել են Արցախում, ապրել են այստեղ, եւ մանավանդ նրանց մասին, որոնց արյան շնչառությամբ փթթել են Գողգոթայի ծաղիկները...

Երբ ես կռվում եմ ասում է զինվորը, թեզ համար եմ կռվում, երեխայիս համար եմ կռվում, հայրենիքիս համար եմ կռվում: Վարդին հավատում է ամուսնուն, հավատում է առավել նրա մահից հետո, զգում է, որ կհաղթեն, քանզի ամուսնու հոգին շրջում է խրամատներով:

«Մարտը շահեցին մերոնք: Շանր գնով: Տղաները Վարդիի ու նրա երեխայի ներկայությամբ խելագար էին, անհաղթելի էին, մարտնչեցին ու... տասնինն հոգուց մնացին տասնյոթը: Ոչ ոք խոսք չէր խոսում: Ամեն մեկն իր պարտքն էր համարում շույել Վարդիի մեջքին կապած մանկան դեմքը ու ժպտալու պես ինչ-որ շարժում նկարել աչքերում: Երեխան հաղթեց, այս պատերազմի ամենափոքրիկ եւ ամենամեծ զինվորը»:

Պոեմի «Հաղորդություն» բանաստեղծական մեներգության մեջ խոսում է պոետը որպես ականատես ու մեկնաբան: Բնաբանը «Երգ երգոցից» է, այնուհետեւ սկսվում է քնարական մի գեղեցիկ սիրերգ.

Անունդ շշնջում եմ երկնքին,

աստղերը թեժանում են միանգամից,

հեռուները անվերջ մոտենում են,

շուրթերիս իջնում է մանանա,

իսկ դու ասում ես

անունս մի տուր:

Բացվում է զգացմունքի աշխարհիկ վայելքի հմայքը: Ու հմայքն այդ հուշում է, թե աղջիկներն Արցախում ժպտում են անթերի, եւ դրա համար հողի մեջ կենսավիշը շատ է, եւ մայրերը հղիանում են կրկնակի: Պոետի գրիչը հետամուտ է տողտողի, այն առանձնահատուկ գծերի ու հատկանիշների հայտնության, որոնք, ի վերջո, իրենց մեջ ամփոփում են արցախյան կերպարի ֆենոմենալության առեղծվածը:

«Հաղորդության» մեջ բանաստեղծը կարծես խոսում է մի հրաշալի աշխարհի մասին: Եվ սերը, հայրենասիրությունն ու ապրելու տենչանքը միախառնվում են իրար, դառնում հաղթանակ:

Քանի սիրում եմ ես կա Հայրենիք:

Եվ սահմանը անսահմանն է հավերժության:

«Եվ կրկին դադարներ» վերնագրի տակ արձակ շարադրանքում նորից պատերազմի արհավիրքներն են նարդկանց փիլիսոփայական կեցվածքով շաղախված «Ի՞նչ արժե կորուստը, երբ նույնարժեք են կյանքն ու մահը տիեզերական ժամանակի ունայնության մեջ»:

«Մնում է նա, ով մնում է, անկախ նրանից՝ գնացած է, թե մնացած», այս միտքը Արուսի համար արդարացում է, քանզի «կյանքը վշտի շերտավորում է մարդու մեջ, ամեն շերտը մի աստիճան է ոտքդ պահ տաս, որ չընկնես: Մեր մի արմատը ցավի մեջ է դալարում»:

Երիկ-ճուտոյի եւ Սիրունի պատմությունը մի իսկական սիրավեպ է, առաջին մեղքի պես մերկ ու անդիմադրելի:

Բնությունը զոհված զինվորի արյան կաթիլների ոսկեղեն կրակներից «Քրիստոսի ծաղիկներ» է աճեցնում: Իսկ զինվորը Ավոն է, Դավոն, Աշոտը, Շահենը, Սիեթը, մինուճար Գակոբը, Գարոնը...

Ո՛ր թերեւս Գարոնի ու թուրք զինվորի երկխոսության մեջ է բանաստեղծը փորձել տալ մահացող զինվորի վերջին վայրկյանների հոգեբանական նկարագիրը: Երկխոսություն, որը ցավ ու զայրույթ է պատճառում, նաեւ ստեղծում տարօրինակ մի մտերմություն:

-Գարոն:

-Գա:

-Ասում եմ, պայմանավորվե՞նք՝ ձերոնք գան, դու ինձ պահես, որ չսպանեն, մերոնք գան ես քեզ պահեմ:

... - Իսկ ձերոնք քեզ կլսե՞ն, Մամեդ:

...կլսեն, կլսեն...

-Բա որ կլսեն, Ջաքաթալան ուր, Ղարաբաղն ուր... Որպես հյուր գայիր, զինու կարասը բացեի, իմ ձեռքով քաշած թթի օղին մեջտեղ բերեի, ցուլ մորթեի, քե՞ք անե՞ինք...

Լանջին ընկած երկու արյունաբամ զինվորներից թուրքն ավելի շուտ մեռավ: Քարի ու հողի թույրը Գարունին մի քիչ էլ պահեց: Մինչեւ կտուցներն արյունոտած գիշանգղերը սկսեցին քրքրել նրա զույգ ոտքերը... Այնուհետեւ ճերմակամորուս ծերունու վճռական ձեռքը նրան տարավ: Ջաքաթալան ուր, Ղարաբաղն ուր... Սրանից դեն հայրենասիրություն չկա: Սա է արյամբ հողի վրա գրված ճշմարիտ պատմությունը...

Իսկ «Մարդն ինքը ճանապարհ է, անցնում է բոլոր մարդկանց միջով, անցնում է բոլոր ծառերի, քարերի, ջրերի, ծաղիկների, տիեզերքի, ամեն մի հյուլեի միջով: Եվ միայն ու միայն այդ ճանապարհին են կատարվում աշխարհի ամենամեծ հայտնությունները՝

կրակի գյուտից մինչեւ Այնշտեյն ու Գրանտ Մաթեուսյան, մինչեւ արցախյան ժենգալով հաց, մինչեւ ատոմային ռումբն ու մինչեւ... սերը:

«Կապարե դար» եւ «Անխուսափելի կյանք» դրվագներում հնչում է գարթոնքի ու նորոգման պատգամը: Քանզի «Գողը պինդ է, եւ երկինքը՝ ամուր: Եվ կյանքը՝ անխուսափելի»: Այսինքն պատք է ապրել, շտկել ընթացքը օրերի, քաղաքականացված, «կապարե դարի» դաժան ու կուպիտ օրենքներով խճողված աշխարհը լցնել բանաստեղծական գեղեցկությամբ: Այլապես

«Ամեն երգո՞ղ ինքն իր վրա է լաց լինում: Իսկ ինչ բառերով էլ ասվում է՝ չի ասվում, աղավաղվում է: Եվ դեռ ոչինչ չի ասվել աշխարհում»:

*Լուսինե Գասպարյան*

*«Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտ*

### **Գյուլվաճառագործությունը Սյունիք-Արցախի տարագում**

Մեր լեռնաշխարհի աշխարհագրական դիրքին, կլիմայական պայմաններին, մեր ժողովրդի տնտեսական փիճակի և մեր ճաշակին համապատասխան ձևավորվել է մեր տարազը: Այն հանդիսացել է մեր ազգի ինքնապահպանման ազդակներից մեկը: Տարազը ևս հայ ժողովրդի ստեղծագործական մտեցումն է իր տոհմային ճաշակին և դարավոր ավանդույթներին:

Տարազը, անցնելով պատմական զարգացման երկար ուղի, բաժանվեց տարբեր ազգագրական տարազախմբերի՝ Բարձր Գայքի, Տուրուբերանի, Վասպուրականի, Տրապիզոնի, Արարատյան Գոփտի, Գողթնի, Աղձնիքի, Փոքր Գայքի Սյունիք-Արցախի, Կիլիկիայի, որոնք իրարից տարբերվում են ձևվածքներով, հյուսվածքերով տեսակներով, գույներով, նախշազարդերով, գլխի հարդարանքով, արդուզարդով, կոշիկներով: Տարազի զարգացման պատմության ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ ձևվածքների մշակման ժամանակ հաշվի էր առնվում նաև տարիքային և սեռային գործոնը: Սյունիքն ու Արցախը իրար մոտ գտնվելով ունեցել են տարազի նույն արտաքին տեսքը, դրա համար էլ կոչվում է հենց Սյունիք-արցախյան տարազ:

Գյուլվաճառագործությունը վաղեմի ժամանակներից հայկական տարագում իր ուրույն տեղն ունեւր: Գայտնի է, որ գոյություն ունեին հյուսման ենթածների և հյուսվածքը զարդարելու հատուկ ոճեր ու

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,  
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:  
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ  
*Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,*  
*հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,*

